ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պաշտոնի անվանումը

Հաշվապահ

Աշխատանքի տեսակը, աշխատաժամանակը

Հիմնական, լրիվ աշխատաժամանակ

Ընկերությունը տրամադրում է

- 25 աշխատանքային օր ամենամյա արձակուրդ
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն

«Վեոլիա Ջուր» ընկերությունը Հայաստանում հանդիսանում է խոշոր գործատուներից մեկը, ով ապահովում է կայուն և հեռանկարային աշխատանք:

Աշխատանքի նկարագիր

- Հաշվապահական հաշվառման իրականացում՝ պահպանելով օրենսդրության պահանջներին համապատասխան հարկային հաշվառման վարման պահանջները;
- Հայկական Ծրագրեր համակարգով անհրաժեշտ ձևակերպումների կատարում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի;
- Հաշվապահության աշխատանքների կանոնակարգում, վերահսկում և ուղղորդում, աշխատակիցների կողմից բարձրացված՝ իրենց գործառույթների շրջանակներում կամ գործառույթների իրականացմանը վերաբերող մասնագիտական հարցերի լուծում և կարգավորում, անհրաժեշտության դեպքում քննարկում ղեկավարի հետ;
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացվող օրենսդրությամբ սահմանված հաշվարկների ու հաշվետվությունների պատրաստում;
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ՀՀ տեղական ինքնակառա-վարման մարմիններ ներկայացվող օրենսդրությամբ սահմանված հաշվարկների ու հաշվետվությունների համար անհրաժեշտ տեղեկատվության պատրաստում, ստուգում և կազմում;
- Հաշվապահական հաշվառման համակարգում առկա տեղեկատվության մասով այլ կողմերին տրամադրվող տեղեկատվության պատրաստում ու ներկայացում տնօրինության կողմից սահմանված կարգին և ձևին համապատասխան:

Պահանջներ

- Բարձրագույն կրթություն տնտեսագիտության, ֆինանսների, հաշվապահության կամ հարակից ոլորտներում
- Իր գործառույթների շրջանակներում ֆինանսական և հարկային օրենսդրության իմացություն;
- Հաշվապահական փաստաթղթերի պահպանման կանոնների իմացություն

- Հաշվապահական (ֆինանսական, հարկային, վիճակագրական) հաշվետվության կազմման ձևերը, կարգը և ներկայացման ժամկետները
- Հաշվապահական հաշվառման և ֆինանսական կառավարման և այլ ծրագրեր (Հայկական ծրագրեր կամ 1C, Ընկերության ներքին ծրագրերը՝ Ինտերակտիվ, Փաստաթղթաշրջանառություն)
- Համակարգչային գիտելիքներ (MS Excel, Word, G suite, Outlook)

Դիմելու կարգ

Թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները /CV հայերեն կամ անգլերեն լեզուներով hr@vjur.am էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի դաշտում պարտադիր նշելով պաշտոնը՝ **Հաշվապահ** կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 033-14-47-48: Հարցազրույցի կհրավիրվեն միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները: